

ՀՏԴ 312(479.243)

Ժողովրդագրություն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ակսել ՊՈՏՈՍՅԱՆ, Անահիտ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բանալի բառեր - Ժողովրդագրական իրավիճակ, բնակչության բնական շարժ, բնակչության սեռատարիքային կառուցվածք, բնակչության միգրացիա, բնակչության բնական աճ, ժողովրդագրական քաղաքականություն, սոցիալ-տնտեսական զարգացում, ռազմաքաղաքական, ժողովրդագրական ճգնաժամ, արտագաղթ:

Ключевые слова - Демографическая ситуация, естественное движение населения, поло-возрастная структура населения, миграция населения, естественный рост населения, демографическая политика, социально-экономическое развитие, демографический кризис, миграция.

Keywords - Demographic situation, natural movement of population, age and sex structure of the population, population migration, natural population growth, demographic policy, social-economic development, demographic crisis, migration.

А.Подосян, А.Григорян

СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ НАГОРНОГО КАРАБАХА

На современном этапе социально-экономического развития Нагорно-Карабахской республики одной из важнейших задач является формирование благоприятной демографической ситуации, которая позволит урегулировать естественный процесс воспроизводства населения, будет способствовать формированию и эффективному использованию трудовых ресурсов.

В статье на основании анализа и обобщения фактических и статистических данных представлены основные демографические показатели: динамика и современное состояние рождаемости, смертности, естественного прироста. Подчеркнута важность решения социально-демографических проблем сельского населения и населенных пунктов республики.

A.Potosyan, A. Grigoryan

THE PROBLEMS OF THE SOCIAL-DEMOGRAPHIC SITUATION OF THE POPULATION OF RURAL AREAS OF NAGORNO-KARABAKH REPUBLIC

One of the major tasks at the present stage of social and economic development of the Nagorno-Karabakh republic is the formation of a favorable demographic situation which will allow to settle natural process of reproduction of the population and to promote the formation and effective use of manpower.

The main demographic indicator of Nagorno Karabakh population, such as the dynamics of the natural growth of birth and death rate and the existent situation was shown in the article based on the conclusion and cumulation of the factual and statistical date analysis. Special importance was given to the rural population of the Republic and to the social-demographic problems of the settlements.

ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից փուլում ռազմավարական նշանակություն ունեցող կարևորագույն խնդիրներից մեկը հանրապետության համար բարենպաստ ժողովրդագրական իրավիճակի ձևավորումն է, որը հնարավորություն կտա կարգավորել բնակչության վերարտադրության բնականոն ընթացքը, կնպաստի աշխատանքային ռեսուրսների ձևավորմանը և դրանց արդյունավետ օգտագործմանը:

Հոդվածում փաստական և վիճակագրական տվյալների վերլուծության ամփոփման և ընդհանրացման հիման վրա տրված է ԼՂՀ բնակչության ժողովրդագրական հիմնական ցուցանիշների՝ ծնելիության, մահացության և բնական աճի շարժընթացը և առկա իրավիճակը, առանձնակի կարևորություն է տրվել հանրապետության գյուղական բնակչության և բնակավայրերի սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներին:

Ցանկացած երկրում ժողովրդագրական իրավիճակի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել բնակավայրերի ու բնակչության թվաքանակի, խտության, վերարտադրության ցուցանիշների, սեռատարիքային կառուցվածքի, տեղաբաշխման ու անհրաժեշտ այլ ցուցանիշների մասին: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել աշխարհագրական, տնտեսագիտական և սոցիոլոգիական հետազոտություններ կատարելիս,

առաջին կեսին տեղի է ունեցել բնակչության թվի կտրուկ նվազում (1995 թ. ԼՂՀ-ի բնակչության թիվը 1989 թ-ի մարդահամարային տարվա համեմատությամբ նվազել է 66.5 հազարով կամ ավելի քան 35 %-ով), ի հայտ են եկել ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բազմաթիվ հիմնախնդիրներ: Չնայած պատերազմին հաջորդած առաջին իսկ տարիներից ԼՂՀ-ում սկսվել և այսօր էլ շարունակվում են լայնածավալ շինարարական աշխատանքները (վերականգնվում են կրթական, մշակույթային և այլ հիմնարկներ, վերաբնակեցվում են նոր բնակավայրեր), սակայն շատ հարցեր դեռևս իրենց լուծումը չեն գտել: Առաջին հերթին դրանք վերաբերվում են ժողովրդագրական իրավիճակի կարգավորմանը՝ երկրի համար բնակչության վերարտադրության առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Հայտնի է, որ բնակչության թվաքանակի շարժընթացի արդյունքները պայմանավորված են ծնելիության և մահացության ցուցանիշներով: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1985 թ.-ից հետո հանրապետությունում ծնելիությունը և բնական աճն զգալիորեն նվազել են: Բնական աճը նույնիսկ ունեցել է բացասական արժեք: 1990-ական թվականների երկրորդ կեսից ծնելիությունը համեմատաբար կայունացել է: Այսպես, 1995-2015 թթ. ընթացքում այն տատանվել է 14,2-17,4 ‰-ի սահմաններում: Մահացության ցուցանիշն այդ ժամանակահատվածում 7,9 հասել է 8,7 ‰-ի: Ընդ որում, հանրապետությունում բնակչության ծնելիության, առավել բարձր ցուցանիշ վերջին 15 տարում գրանցվել է 2009 թ-ին՝ 20 ‰, որից հետո այն աստիճանաբար նվազել է [8,1]:

Ժողովրդագրական իրավիճակը սրված է ԼՂՀ գրեթե բոլոր շրջաններում և բնակավայրերում: Ամենուրեք դիտվում է ծնելիության նվազում, սակայն կապված մահացության ցուցանիշների տատանումներից, բնական աճը վերջին տարիների ընթացքում կայուն աճ կամ նվազում չի ունեցել, թեև բոլոր շրջաններում էլ ընդհանուր առմամբ նվազել է: Առավել անմխիթար է վիճակը Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի և Հաղարծնի շրջաններում, որը պայմանավորված է նախ և առաջ պատերազմի ժամանակ այդ շրջաններում ավելի շատ երիտասարդ տարիքի բնակչության զոհվելու կամ պատերազմից հետո նրանց արտահոսքով: Ծնելիության ամենաբարձր գործակիցներն ունեն Շահումյանի (14,4-26,6 ‰) և Քաշաթաղի (15,8-29,3‰) շրջանները: Այստեղ առավելապես ապրում են երիտասարդ վերաբնակիչներ, իսկ կանանց մեծ մասն աշխատանք չունի: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ծնելիության մակարդակը երբեմն անցել է 29 ‰-ի սահմանը: Մահացության մակարդակն այս երկու շրջաններում նույնպես ամենացածրն է, տատանվելով 1,6-6,4 ‰-ի սահմաններում [1]:

Բնակչության թվաքանակի փոփոխություններն իրենց անդրադարձն են ունեցել ԼՂՀ բնակչության սեռային կազմի վրա: Ըստ շրջանների բնակչության սեռային կազմի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2015 թ. դրությամբ, բացի Շահումյանից, Հաղարծնից և Քաշաթաղի մնացած շրջաններում, գերակշռում են կանայք: Կանայք ամենաբարձր տեսակարար կշիռն ունեն Ստեփանակերտում (53,6%), իսկ Մարտակերտի շրջանում կանանց և տղամարդկանց տեսակարար կշիռներն հավասար են: Շահումյանի շրջանում կանանց տեսակարար կշիռն ամենացածրն է և կազմում է ընդհանուր բնակչության 48.7 %-ը [2]: Դրա հիմնական պատճառն այն է, որ ազատագրված այդ տարածքներում դեռևս չկան քիչ թե շատ բավարար կենցաղային պայմաններ բնակչության կյանքի կազմակերպման համար: Այստեղ շատ են միայնակ տղամարդիկ, որոնց ընտանիքները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում կամ ԼՂՀ այլ շրջաններում:

Բնակչության ժողովրդագրական իրավիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից և ծնելիության վրա ազդող գործոններից են ամուսնությունը, ամուսնալուծությունը, երիտասարդ ընտանիքների արտագաղթը, գործազրկությունը, սոցիալական պայմանները, բնակչության կենսամակարդակը և այլ ցուցանիշներ: 2005 թ. մարդահամարի տվյալներով՝ ԼՂՀ-ում ամուսնացած չէր 25-39 տարեկան տղամարդկանց 24,04%-ը (քաղաքներում՝ 24,73 %, գյուղերում՝ 23,35 %), իսկ 15 տարեկանից բարձր բնակչության կազմում երբեք ամուսնացած չեն եղել ԼՂՀ բնակչության 25,5 %-ը, որը բավականին բարձր ցուցանիշ է: [8] Այն առավել բարձր է քաղաքներում, որտեղ երբեք ամուսնացած չի եղել 15 տարեկանից բարձր բնակչության 28,9 %-ը,

իշխանության մարմիններից սոցիալ-տնտեսական համալիր միջոցառումների իրականացում՝ ժողովրդագրական նպատակային քաղաքականության մշակում և իրականացում, որը կնպաստի պետության համար մոտ հեռանկարում և ապագայում առավել բարենպաստ ժողովրդագրական իրավիճակի ձևավորմանը՝ բնակչության վերարտադրության և սեռատարիքային կառուցվածքի կարգավորմանը: Այդպիսի գործընթացներից առաջիններից մեկը պետք է լինի հանրապետության գյուղական տարածքների տնտեսական բազայի ամրապնդումը՝ գյուղատնտեսական հողատարածքների եկամտաբերության բարձրացումը և տնտեսական գործունեության այլ ձևերի խրախուսումն ու զարգացումը: Այդ առումով խիստ կարևոր է ԼՂՀ-ի շրջանների առանձին գյուղական բնակավայրերում գյուղատնտեսական հումքի ընդունման և վերամշակման ձեռնարկությունների ստեղծումը:

ԼՂՀ գյուղական բնակավայրերում ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը որոշակիորեն կարող է նպաստել նաև հանրապետության գյուղական տարածքների զբոսաշրջային և ռեկրեացիոն ռեսուրսների օգտագործումը՝ գյուղական (ագրոզբոսաշրջության), էկոլոգիական և էթնիկական զբոսաշրջության ձևերի զարգացումը:

Այսպիսով, բերված վերլուծության արդյունքների ամփոփումը և ընդհանրացումը թույլ է տալիս եզրակացնել, որ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից փուլում ռազմավարական նշանակություն ունեցող խնդիրներից մեկը պետության և հասարակության համար առավել բարենպաստ ժողովրդագրական իրավիճակի ձևավորումն է: Դա հնարավորություն կտա կարգավորել բնակչության վերարտադրության գործընթացը, կնպաստի աշխատանքային ռեսուրսների ձևավորմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, բնակավայրերի, մասնավորապես՝ գյուղական տարածքների ամրապնդմանը և երկրի պաշտպանունակության ուժեղացմանը:

Գրականություն

1. ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու 2015 թ., Ստեփանակերտ 2016 թ.:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության թվաքանակը 2015 թ-ի հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տարեգիրք, Ստեփանակերտ 2015 թ.:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տեղեկագիրք - Ստեփանակերտ-2005թ.:
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տեղեկագիրք - Ստեփանակերտ-2015թ.:
5. Մանասյան Մ.Գ., ՀՀ տարաբնակեցման համակարգը, Ե., 2005, 395 էջ
6. Միգրացիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2011, 2012թթ. -ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն- Ստեփանակերտ, 2012թ.:
7. Պոտոսյան Ա.Հ., ՀՀ գյուղական բնակչությունը և բնակավայրերը, Ե. 2013, 416 էջ:
8. Սուջյան Ս.Ա., ԼՂՀ տարաբնակեցման արդի համակարգի ձևավորման նախադրյալներն ու զարգացման հիմնախնդիրները, աշխարհագրական գիտությունների գիտական աստիճանի հալցման ատենախոսություն, Ե., 2011, 167 էջ:

Տվյալներ հեղինակների մասին.

1. Պտտոսյան Ակսել Հարությունի, աշխ. գիտ թեկ., դոցենտ, ԵՊՀ
2. Գրիգորյան Անահիտ Վլադիմիրի, աշխ. գիտ թեկ., դոցենտ, ԱրՊՀ

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեկտիվի անդամ, աշխ. գ. դ. Ա.Ռ. Ավագյանը: